ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ հայցը ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 50,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 17.08.2023թ. թիվ 75 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Ա. Բաղիրյան) 2023թ. սեպտեմբերի 12-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն</u>: վճիռը մտել է օրինական ուժի մեջ
« » _____ 2024թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ